

ՄՐՅՈՒՅԹ RN#24-030

*Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ ծրագրի
շրջանակներում գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերման, առաքման, և
նախնական գործարկման*

Գնառաջարկի հրավեր

Գնառաջարկների ներկայացման սկզբնաժամկետ՝ **30 նոյեմբերի 2024թ.**

Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ **16 դեկտեմբերի, 2024թ., ժամը 16:00**

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքների համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված է պահանջվող ապրանքների մասնագրերը:

Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված:

“Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագրի շրջանակներում կանխավճար չի կատարվում: Ապրանքի համար վճարումը կատարվում է ապրանքի նախնական գործարկումից հետո:

Ապրանքների առաքումը պետք է կատարվի վաճառողի/մատակարարի կողմից: Առանձին ապրանքների առաքման վայրը նշված է Տեխնիկական Առաջադրանքում համապատասխան սարքավորման նկարագրությունից հետո:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը**, պետք է մինչև **2024 թ. Դեկտեմբերի 16-ի , ժամը 16:00** ներկայացվի “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամի գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40:

Հարցերի դեպքում կարող եք գրել samvel.dallakyan@card.am հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքում՝ <http://card.am/hy/tenders>

համապատասխան մրցույթի «*հարց ու պատասխան*» հղման մեջ:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆՔՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ Բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՍԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40 հասցեում, ժամը 17:00-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների մասին էլեկտրոնային փոստով: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. Գները: Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագիրը միջպետական պայմանագրի հիման վրա ազատված է ԱԱՀ-ից և ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5. Գնառաջարկների գնահատում: Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

Գնառաջարկները գնահատելիս գնառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____ (Ամսաթիվ)

Ում: “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամ

ՀՀ, ք.Երևան, Ազատության 1\21-40

Մենք (Կազմակերպության անունը) առաջարկում ենք առաքել RN#24-030 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

№	Անվանում	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Ընդամենը ՀՀ դրամ առանց ԱԱՀ
1	Վակուումային հոմոգենացնող ապարատ	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
2	Տրակտոր մեկ	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
3	Ավտոկշեռք	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
4	Բլդուրի և ցորենի փայլեցման և հացահատիկի խոնավության կարգավորման սարքավորումներ	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
5	Կարտոֆիլահան	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
6	Շարքացան	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
7	Կարտոֆիլացան	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
8	Գութան	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
9	Տրակտոր երկու	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
10	Ֆոտո-տեսակավորող սարք	2 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի (օրերի քանակը) օր:

Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ ծրագրի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է (օրերի քանակը թվերով և բառերով) օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ.փոստ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տեխնիկական առաջադրանք Գյուղատնտեսական սարքավորումներ

1. Վակումային հոմոգենացնող ապարատ 500 լ

Նյութը՝ սննդային, չժանգոտվող պողպատ, AISI 304, կոնաձև հատակով:

Տարողության ծավալը՝ 500 լ օգտ. .350լ:

Շրջանակային խառնիչ՝ 2.2 ԿՎտ փոխանցման շարժիչով:

Խառնիչի լիսեռի պտտման արագությունը՝ 0-200 պտր է, կարգավորելի է արագության փոխարկիչի միջոցով (ինվերտոր):

Խառնիչի լիսեռի վրա ամրացված են ֆտորոպլաստիկ քերիչներ:

Ջեռուցման բաձկոնը ծավալուն է:

Ջեռուցում՝ 45 ԿՎտ հզորությամբ ներկառուցված ջեռուցման տարրերի միջոցով՝ յուրաքանչյուրը 15ԿՎտ:

Ջերմաստիճանի ավտոմատ պահպանման, ջեռուցման և հովացման գործընթացի ավտոմատ հարկադիր միացման և անջատման գործառնություն, խառնիչի, հոմոգենիզատորի և օտուտակային պոմպի կառավարման գործառնություն:

Բեռնարկերի հովացման համակարգը օդաճնշական փականներով ջեռուցման բաձկոնի մեջ ներկառուցված կծիկի միջոցով է դեպի հովացուցիչ նյութի մուտքն ու ելքը:

Ջրամատակարարման կցամաս՝ երկու երկալիք թերմոստատ:

Ջերմաստիճանի սենսորներ արտադրանքի և ջեռուցման բաձկոնում:

Անջատիչ փականներ՝ սկավառակային փականներով 50,8մմ տրամագծով, տարրային հատակի կենտրոնում գտնվող արտահոսքի խողովակի վրա:

Ծածկույթի կոն:

կափարիչը բարձրանում է էլեկտրական շարժիչով:

Բեռնարկը՝ չժանգոտվող պողպատից՝ շրջանակի վրա:

Պոմպ, վակուումային, մոնովակուումաչափ, էլեկտրամագնիսական սարք, ստուգիչ փական, վակուումային խողովակ թակարդով և արտահոսքով տանկ:

Դիտման պատուհան DN=100մմ ռեակտորի ներսի լուսավորությամբ:

Երկու ձագար՝ չոր և հեղուկ պատրաստման բաղադրիչների ներմուծման համար:

Պետք է առաքվի Տավուշի մարզի Բերդավան համայնք

2. Տրակտոր մեկ

	Տեխնիկական նկարագրություն	
1	Տեսակը	Փակ խցիկ, օդորակիչով
2	Շարժիչ	Տուրբո / Դիզելային
3	Շարժիչի հզորություն	96ԿՎՏ / 130 Ձ.Ու
4	Շարժիչի մխոցների քանակ	6
5	Աշխատանքային ծավալը	7,12 լ
6	Առավելագույն պտտող մոմենտ	500 Ն/մ
7	Վառելիքի բաքի տարողությունը	270 լիտր (140+130)
8	Փոխանցման տուփ	Սինխրոնային դիսպազոնային
9	Փոխանցումների քանակ	16F+8R
10	Արագության միջակայք՝ առաջ / հետ	2.1-33,8 / 4,0-15,8 կմ/ժ
11	Փոխանցման լիսեռի /PTO/ արագությունը	540/1000պտույտ/րոպեում

12	Գետնահեռություն MIN	465մմ
13	Դեմի ծանրոցներ	8x45/2x40կգ
14	Մինիմալ աշխատանքային քաշը	5730 կգ
15	Հետևի թևեր	Հիդրավլիկ / Բարձրացնող
16	Թևերի բեռնակիրությունը	4300կգ
17	Հետևի կախովի հիդրավլիկ համակարգի առավելագույն ճնշումը	20 ՄՊա
18	Հետևի կախովի հիդրավլիկ համակարգի բաքի տարողությունը	25լ
19	Անիվների քարշակ	4 անիվը քարշակող /4x4/
20	Առջևի անիվը	1540-2090 մմ
21	Հետևի անիվը	1530-2150 մմ
22	Առջևի անվաղող	420/70 R24
23	Հետևի անվաղող	18.4R38
24	Երկարությունը	4500 մմ
25	Լայնությունը	2250 մմ
26	Բարձրությունը	2850 մմ
27	Երաշխիք	Առնվազն 12 ամիս
28	Դիմացի բեռնող սարքավորման հնարավորություն	Այո
29	Բեռնատարողությունը՝	Վերևի դիրքում՝ 1600կգ Պոկման ուժը՝ 2160 կգ
30	Աշխատանքային բարձրությունը	3750մմ
31	Բեռնող սարքավորման հանելը տրակտորի վրայից	Արագ հանվող
32	Բեռնող սարքավորման թևերի մետաղի հաստությունը՝	5 մմ
33	Կովշի թեքման անկյունը	Վերևի դիրքում՝ մինչև 74° Գետնին՝ մինչև 68°
34	Կովշի տեսակը	Ծնոտավոր, մեջտեղից բացվող, դիմացի ցիցերով

35	Կովշի տարողությունը	08-1,2մ ³
36	Բեռնող սարքավորման և կովշի կառավարումը	Խցիկից՝ վահանակի օգնությամբ

Պետք է առաքվի Շիրակի մարզի Հայկաձոր համայնք

3. Ավտոկշեռք

- 15 մ երկարությամբ
- 60 տոննա կշռելիությամբ
- Մետաղյա հարթակը պետք է լինի ներկված
- Տեղագոտվիչները ունենան IP68 (Պաշտպանիչ դաս)
- Կշեռքի տեղափոխումը և տեղադրումը պետք է իրականացվի տեղադրող ընկերության կողմից
- Կշեռքի հետ պետք է տրվի առնցազն 3 տարի երաշխիք

Քաշային ցուցուչի տեխնիկական պարամետրեր
1. IP67 (Պաշտպանիչ դաս)
2. Մարտկոցով աշխատելու հնարավորություն
3. Քաշային ստաբիլության ապահովում
4. Մեծ լեղ էկրան
5. Թվային ֆիլտրացում
6. RS-232 ինտերֆեյս
7. Տեղագոտվիչների միացում (մինչև 8, 350 օհմ)
8. Աշխատանքային ջերմաստիճան - 10° -ից մինչև + 40°

Տեղագոտվիչի տեխնիկական պարամետրեր
IP68 (Պաշտպանիչ դաս)
Բեռնվածություն - 25.000 կգ
Աշխատանքային փոխանցման գործակից մվ/վ - 2.0 ± 0,005
Չրոյական արժեքի միջակայք մվ/վ - 0,0 ± 0,020
Ճշտության դաս - C3
Դիմադրություն (Օհմ)՝ մուտքային - 350 ± 3,5 ելքային 350 ± 3,5
Աշխատանքի ջերմաստիճանային միջակայք (- 40° -ից մինչև + 70°)
Ֆիզիկական չափեր՝ բարձրություն - 150 մմ, Տրամագիծ - 45,4 մմ

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Մարգարա համայնք

4. Բլոուրի և ցորենի փայլեցման և հացահատիկի խոնավության կարգավորման սարքավորումներ

Ընդհանուր արտադրական արժեչոթայի համար անհրաժեշտ են բլոուրի և ցորենի փայլեցման և հացահատիկի խոնավության կարգավորման սարքավորումներ, քանի որ ընդհանուր արտադրական ցիկլի հոսքային գծի մեջ օգտագործվում են GUNMAK ֆիրմայի այլ սարքավորումներ, այլ ընկերության նմանատիպ սարքավորումները չեն փոխգործակցի այս սարքավորումների հետ, հետևաբար անհրաժեշտ են հենց GUNMAK ընկերության համապատասխան սարքավորումները, որոնց մոդելները և մասնագրերը ներկայացված են ստորև:



BSP 255 բլոուրի փայլեցում

PLC վերահսկվող. **Покрытие втулки вала (втулки вала ծածկույթ) 304 SS**

Տարողունակություն ~ 1.5 տոննա/ժամ

55 kW 1500 rpm շարժիչ

Рабочая сила тока (աշխատող հոսանքի ուժ) 80-85ի միջակայքում

Մուտքային հոսանքի հանդեպ զգայուն ավտոմատ անջատիչ



BNK 1200x1000/1+1 Վերջնական արտադրանքի խոնավության վերահսկման սարք 304 SS

Մարմնի կառուցվածք 2.5 մմ օդային բջիջներ t:2.00 մմ

Ներքևի կորպուս՝ գոլորշային ռադիատոր սև նյութից ~ 46.66 m²

Օձաձև խցիկ 1 հատ, սառեցնող խցիկ 1 հատ

0.75 kW 40 rpm փոխանցման շարժիչ + ավտոմատացում

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Մարգարա համայնք

5. Կարտոֆիլահան

Շարքերի քանակը	2
Քաշը	720կգ
Ընդգրկման լայնություն	140 սմ
Փորելու խորություն	22 սմ
Երկարություն	280 սմ
Լայնություն	183 սմ
Բարձրություն	120 սմ
Տրակտորի հզորություն	Առնվազն 60 ձ/ու
Արտադրողականություն	0.25-0.47 հա/ժ

Պետք է առաքվի Գեգարքունիքի մարզի Վարդենիկ համայնք

6. Շարքացան

Տեսակը	24 շարք
Սերմի բաք	380 կգ
Պարարտանյութի բաք	380 կգ
Լայնություն	420 սմ
Երկարություն	300 սմ
Բարձրություն	140 սմ
Քաշ	1155 կգ
Սկավառակների հեռավորություն	12.5-14
Աշխատանքային լայնություն	300-336 սմ
Տրակտորի հզորություն	Առնվազն 70 ձ/ու

Պետք է առաքվի Գեգարքունիքի մարզի Վարդենիկ համայնք

7. Կարտոֆիլացան

Շարքերի քանակը	4 շարք
Չափերը	1720/3600/1700 սմ
Քաշը	1410 կգ
Տրակտորի հզորությունը	Առնվազն 100 ձ/ու
Արտադրողականություն	1 հա/ժ
Աշխատանքային լայնություն	300 սմ

Շարքերի հեռավորությունը	70-75սմ
Պարարտանյութի բունկեր	

Պետք է առաքվի Գեգարքունիքի մարզի Վարդենիկ համայնք

8. Գութան

Տեսակը	Ռներսային
Խոփերի քանակը	4x2
Աշխատանքային լայնություն	120/140/160/180 սմ (Կարգավորվող)
Ոտքի բարձրություն	80 սմ
Խոփերի հեռավորություն	90 սմ
Աշխատանքային խորություն	45 սմ
Քաշը	1100 կգ
Տրակտորի հզորություն	75-115 ձ/ու

Պետք է առաքվի Գեգարքունիքի մարզի Վարդենիկ համայնք

9. Տրակտոր երկու

1.	Տեխնիկական նկարագրություն	
2	Քաշը, կգ	6140 (առանց բեռերի)
3	Շարժիչը	դիզելային/տուռքո
4	Շարժիչի հզորությունը ձ.ուժ	130
5	Ծնկաձև լիսեռի պտույտների քանակը	2300 պտույտ/րոպե
6	Շարժիչը երեք աշխատանքային ռեժիմներով	ցածր/միջին/ բարձր բեռնվածություն
7	Շարժիչի ծավալը,	6.5
8	Հզորության փոխանցման լիսեռ	մեխանիկական
9	Շարժաբեր	4WD
10	Փոխանցման տուվիղ	մեխանիկական

11	Փոխանցումների թիվը (առաջ/հետ)	12/12
12	Փոխանցման դիապազոնը	4x3
13	Յ.Ա.Լ., պտ/րոպե	540/1000
14	Վառելիքի բաք, Լ սեղմող	380
15	Ետևի կախոց	սեղմող
16	Անիվային բազա, մմ	2950
17	Մինիմալ շրջադարձի շառավիղը, մ	5
18	Մինիմալ լուսաձեռպը, մմ	480
19	Անվադողեր, առջև/հետև	14.9-26/18.4-38
20	Ետևի կախոցի բեռնունակությունը, կգ	3860
21	Գաբարիտային չափսերը, մմ	Գաբարիտային չափսերը, մմ
22	Երկարությունը	5488
23	Լայնությունը	2500
24	բարձրությունը	2950
25	օդորակիչ	առկա
26	առջևի և ետևի բալաստի ծանրոցներ	առկա

Երաշխիք առնվազն երկու տարի

Ետերաշխիքային սպասարկում

Տեխնիկական սպասարկման ծառայություններ ցանկացած վայրում

Պետք է առաքվի Լոռու մարզի Տաշիր համայնք

10. Ֆոտո-տեսակավորող սարք

1. Ֆոտո տեսակավորող սարք՝ 10 հոսքով (10տոպ), նախատեսված հացահատիկի , հատիկաընդեղենի գտելու և մաքրելու համար, այդ թվում (ցորեն, ձավար , գարի , հաճար , ոսպ, սիսեռ լոբի, ոլոռ , հնդկաձավար, ինչպես նաև դրանց սերմերը, չամանի սերմ)։ Սարքավորումը տեսակավորում է ըստ գույների՝ համապատասխան համակարգչում ներմուծված ծրագրի՝ ամեն տեսակի համար առանձին։

2. Սարքավորումը պետք է ունենա 10 հոսքային ուղի, ամեն ուղու վրա 3 տեսախցիկ-սենսոր, որից երկուսը գունային , մեկը` ինֆրակարմիր:

Արտադրողականությունը 15+ տոննա ժամ

Տեսակավորման ճշգրտությունը 99.5%+

Հոսքային ուղու CCD մատրիցա 5400+ պիքսել

Հոսանքի լարումը` 180-240 Վ

Հոսանքի հաճախականությունը 50Հերց

Հոսանքի նոմինալ հզորություն 6.5 կՎտ

Օդի ճնշում (Mpa) 0.2-0.3

Օդի ծախսը (L/min) 2600-5000

Օդի մատակարարումը (Mpa) 0.6-0.8

Սարքավորման չափսը (Ե.Լ.Բ) մմ 3630*1545*1860

Քաշը կգ 1800

3. Հիմնական պարամետրեր

Հոսքեր 64*10

3.1 Բարձր որակի այլումին

3.2 անոդային օքսիդացում

3.3 դիմացկունություն , ջրակայունություն

3.4 Երկարատև ծառայող և քիչ սպասարկում պահանջող նյութերի առկայություն

3.5 տեսախցիկների ծառայության երաշխիք առնվազն 2 տարի:

3.6 CCD բարձր զգայունությամբ սենսորներ, առնվազն 2 տարվա երաշխիքով

3.7 Լույսի աղբյուր. բացառապես LED լամպեր` հավասարաչափ լուսավորության ապահովմամբ , առնվազն 24 ամիս երաշխիքով:

3.8 Ինժեկտոր: Ապահոված լինի բարձր արագության Էֆեկտիվությամբ` 1500 անգամ/ վայրկյան, օդի ցածր ծախս, 18 ամիս երաշխիքով

3.9. Ֆիլտր: Ունենա ֆիլտրման բարձր ճշգրտություն և բարձր արագություն

3.10 Մոնիտոր: Լինի սենսորային , հեշտ կառավարվող , բարձր զգայունությամբ, ծրագրային թարմացման ծառայության հնարավորությամբ, 24 ամիս երաշխիքով:

3.11 Բունկեր: Չժանգոտվող պողպատով , ջրակայուն (304 stainless steel մակնիշ)

3.12 Փաթեթավորում , փայտե արկղ` տեղափոխումը հեշտացնելու և վնասվածքներից պաշտպանելու համար

Չափսերը` 3764*1554*1871

Մեկը պետք է առաքվի Սյունիքի մարզի Գորիս քաղաք,
իսկ մյուսը Կոտայքի մարզի Եղվարդ համայնք